ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«ՀՀ ԿԳՄՍՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՆԳԼԵՐԵՆ

ԹԵՄԱ՝ Սովորողների գիտելիքների պարտադիր նվազագույն շեմի յուրացումը համագործակցային ուսումնառության մեթոդով

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Վարդենիս

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հասմիկ Բեյբության

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Արմինե Սահակյան

ԴՊՐՈՑ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ավազանի հիմնական դպրոց

Վարդենիս- **2022**

Բովանդակություն

1.Ներածություն.....**3**

2.Գրական ակնարկ.....5

3.Փորձարարական հետազոտություն.....7

3.1.Խմբի նկարագիրը.....8

3.2.Փորձարարական դասեր.....8

3.2.1.Փորձարարական դաս-1.....9

3.3.2.Փորձարարական դաս-2.....10

4.Վերլուծություն.....10

5.Գրականության ցանկ.....12

6.Հավելված.....13

1.Դասապլան1.....14

2.Դասապլան2.....18

Ներածություն

Մեր երկրի կարևոր հարստություններից մեկը գիտական ներուժն է, որի ձևավորման պատասխանատվությունը կրում է նաև հանրակրթությունը: Հասարակական բոլոր փոփոխությունները

ազդում են նաև կրթական համակարգի վրա: Ներկայումս հանրակրթության մեջ իրականացվում են կրթական բարեփոխումներ,որոնք անդրադառնում են կրթության կազմակերպման տարբեր հարցերի վրա: Այս աշխատանքում ցանկանում ենք անդրադառնալ բարեփոխումների պահանջով առաջադրված համագործակցային մեթոդների կիրառման արդյունավետության ուղիների մատնանշմանը: Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է: Այն ենթանդրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ: Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածության ապահովումը: Համագործակցային մեթոդների կիրառումն ինքնանպատակ չէ.դրանք պետք է ուղղված լինեն սովորողների ինչպես մտավոր ու զգայական կարողությունների, այնպես էլ ինքնուրույնության, սոցիալականացման և այլ հմտությունների զարգացմանը: Մեթոդի ընտրության վրա կարող են ազդել՝

- ✔ ուսուցման նպատակները և խնդիրները,
- ✔ նյութի բովանդակությունը,
- ✔ ուսումնական նյութի ծավալը և բարդությունը,
- ✔ նոր գիտելիք ձեռք բերելու նկատմամբ աշակերտների շահագրգռվածությունը և համագործակցային հմտությունների մակարդակը,
- ✔ աշակերտների տարիքային առանձնահատկությունները,
- ✔ ուսումնական ժամանակը,
- ✔ ուսուցման նյութատեխնիկական պայմանները,
- ✔ ուսուցիչ –աշակերտ փոխհարաբերությունները,
- ✔ աշակերտների թվանակը դասարանում,
- ✔ ուսուցչի պատրաստվածության մակարդակը և այլն:

Համագործակցային ուսուցման արդյունավետության համար շատ կարևոր է ուսուցչի դասի պլանավորման նախապատրաստական աշխատանքների գրագետ կազմակերպումը:

Այն ուսուցչից պահանջում է՝

- ✔ հիմնավորել տվյալ դասը համագործակցային խմբերով կազմակերպելու անհրաժեշտությունը,
- ✔ որոշել համապատասխան խմբեր կազմելու սկզբունքները, ձևերը,
- ✔ նախապատրաստել անհրաժեշտ բաշխիչ նյութեր,
- ✔ ձևակերպել նպատակներին համապատասխան առաջադրանքներ,
- ✔ ձևակերպել առաջադրանքների կատարման հստակ հրահանգներ,
- ✔ որոշել հանձնարարությունների համապատասխան ծավալ:

Դասի կազմակերպման ժամանակ ուսուցչի հիմնական աշխատանքը կլինի բոլոր խմբերի աշխատանքների վերահսկումն ու ուղղորդումը: Յուրաքանչյուր մեթոդի կիրառման նպատակները խիստ բազմազան են, ինչը ենթադրում է նաև, նպատակից կախված, մեթոդի ձևափոխման հնարավորություն: Ցանկացած դաս և դասարան եզակի է, ուստի ուսուցչի վարպետության ցուցանիշներից մեկը նպատակին համապատասխան մեթոդի ընտրությունն է :

Համագործակցային մեթոդները մեծ ներուժ ունեն աշակերտակենտրոն ուսուցում կազմակերպելու համար, ինչը ևս կրթական բարեփոխումների կարևոր պահանջներից է : Նշենք նաև, որ ժամանակակից կրթական գործընթացում կարևորվում է ոչ թե պատրաստի գիտելիքի մատուցումն ուսուցչի կողմից, այլ աշակերտին մասնակից դարձնելը այդ գիտելիքի ձեռքբերմանը: Համագործակցային մեթոդները թույլ են տալիս առավել արդյունավետ յուրացնել նոր նյութը, զարգացնել ինքնուրույնության, համագործակցային, հետազոտական աշխատանք կատարելու բազում հմտություններ, օրինակ՝ տեղեկույթի որոնման, հավաքման, մշակման և այլն: Սակայն այդ հմտությունների ձեռքբերումը սովորողների կողմից երկարատև աշխատանքի արդյունք է, իսկ ուսուցչին հնարավորություն է տալիս կատարելագործել, հարստացնել իր մեթոդական մոտեցումները տարբեր խնդիրների լուծման ժամանակ: Այսօր մանկավարժների մեթոդական զինանոցը բավականին հարուստ է, սակայն բոլորովին այլ է դրանց կիրառությունը: ՈՒսուցիչների կողմից հաճախ կիրառվում են բազում մեթոդներ, սակայն դրանք գրեթե միշտ կա՛մ չեն հասնում տրամաբանական ավարտին՝ դասի նպատակին, կա՛մ էլ ժամանակի մեջ չեն տեղավորվում, խմբերը համասեռ չեն կազմվում, խմբերում թիմային աշխատանքը չի ստացվում, ոչ բոլորն են ակտիվություն ցուցաբերում, անհրաժեշտ պահանջները կա՛մ չեն հասկանում, կա՛մ էլ թերի են կատարում: Ցանկացած նոր աշխատանք կատարելիս կարող են բացահայտվել բազում թերություններ, որոնք շտկվում, ճշգրտվում են աշխատանքի բազմակի կրկնության արդյունքում:

Հետազոտության մեթոդիկայի աշխատանքը շատերին հայտնի մեթոդի կիրառման մի առաջարկ է՝ ուսուցիչների մեթոդական մոտեցումները հարստացնելու նպատակով: Կիրառելի է ընկալման փուլում օգտագործվող «Երեք բանալի և մեկ կողպեք», «Աշակերտների թիմային առաջադիմություն», «Խճանկար», «Տ-ածև » ադյուսակի, «Մ-ձև » ադյուսակի մեթոդները: Մեթոդի կիրառման հնարավորություն՝ որպես տեքստի ընկալման, վերլուծության, գլխավորը երկրորդականից տարբերելու, սեփական կարծիքը հիմնավորելու, ընդհանրացման, համագործակցային հմտությունների զարգացման արդյունավետ ձև: Մեթոդը նպատակահարմար է կիրառել այն թեմաների դասավանդման ժամանակ, որոնք բավականին ծավալուն են:

Բնականաբար առաջին անգամ մեթոդը կիրառելիս չեն կարող թերություններ չլինել, ուստի որոշակի հաջողություն գրանցելուց հետո մեթոդի կիրառումը և աշակերտների կողմից այն օգտագործելու արյունավետությունը բարձրացնելու համար ցանկալի է և օգտակար դրա բազմակի կիրառությունը:

Գրական ակնարկ

Համագործակցային ուսուցման շրջանակներում Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին:

Խճանկարը ևս համագործակցային ուսուցման մեթոդ է: Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի A&M համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից: Խճանկարի փուլերն են.

նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,

աշխատանք փորձագիտական խմբում,

աշխատանք ուսումնական խմբում,

ավարտական աշխատանք,ամփոփում:

Շրջագայություն պատկերասրահում մեթոդը «Խճանկար» մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

Երբեք բանալի և մեկ կողպեք մեթոդի դեպքում աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան: Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն:

Նման ուսուցման դեպքում ուսուցիչը միայն կարգավորում կազմակերպում է գործընթացը, տալիս խորհրդատվություն:

3.Փորձարարական հետազոտություն

3.1.Խմբի նկարագիրը՝

Սովորողների գիտելիքների պարտադիր նվազագույնի յուրացումը համագործակցային ուսումնառության մեթոդի կիրառմամբ նախագծված հետազոտական աշխատանքը իրագործելու նպատակով ընտրել եմ որպես փորձարարական դասարան Ավազանի հիմնական դպրոցի 7-րդ դասարանը՝

- ✔ հետազոտվող դասարանում աշակերտներների թիվն էր 16 աշակերտ՝ 7 աղջիկ, 9 տղա:
- ✔ աշակերտների առաջադիմության ու զարգացման մակարդակը հիմնականում միջին են :
- ✔ հետազոտելի դասարանում ուսուցումն իրականացրել եմ համագործակցային ուսուցման մեթոդի կիրառմամբ, օգտագործելով նաև այս մեթոդի տարատեսակները՝ խճանկար, շրջագայություն պատկերասրահում, երեք բանալի մեկ կողպեք մեթոդները:

Հետազոտության շրջանակներում փորձարարական դասարանում ընտրվել են՝

- ✔ Անգլերեն լեզվի դասագրքի երկու թեմաներ: Գիտափորձի իրականացման համար կիրառման մեջ են դրվել իմ կողմից նախապես մշակված դասերի պլանները,
- ✔ հետազոտության համար հիմք է ընդունվել « Հանրակրթության պետական չափորոշիչը,
- ✔ հետազոտվող դասարաններում մանկավարժական հետազոտության արդյունքները չափվել են իմ կողմից մշակված հարցաշար-քարտերի վերլուծության հիման վրա:

Դպրոցի հետազոտելի 7-րդ դասարանում, սովորաբար նոր թեմա ընտրելիս կապ եմ հաստատում սովորողների ունեցած գիտելիքների ու պատկերացումների և ուսուցանվող նոր նյութի միջև: Հետազոտության ընթացքում հատուկ ուշադրության կենտրոնում եմ պահելու 5 աշակերտների, որոնք իմ կարծիքով ավելի կաշկանդված են և դժվարությամբ են մասնակցում դասապրոցեսին: Նպատակն է նաև փորձարարական դասերի արդյունքում ակտիվացնել այս աշակերտներին , որպեսզի դասերին ավելի ակտիվորեն մասնակցեն: Դասի սկզբնական փուլում առաջադրանքները ձևակերպում եմ մտածելու հրավիրող նախադասություններով, որոնք թույլ են տալիս սովորողին զարգացնել ստեղծագործական մտածողությունը, մտքերը ազատ արտահայտելու հմտությունը զարգացնել, սովորողներին դրդում եմ առաջադրել վարկածներ:

3.2. Փորձարարական դաս-1

Այսօրվա դասն էր ‹‹Present Continuous Tense›› թեման (տե՛ս դասապլան-1 էջ՝ 13): Դասաժամն սկսվեց տնային աշխատանքի ստուգումով, բոլորը ներկայացրին իրենց տնային աշխատանքները, քննարկվեց տնային աշխատանքի սխալները , կատարվեցին շտկումներ: Այնուհետև բացատրվեց նոր նյութը, կատարվեց անդրադարձ, ապահովվեց հետադարձ կապ աշակերտ-ուսուցիչ-աշակերտ: Այնուհետ դասարանը տարասեռության սկզբունքով բաժանվեց չորս հոգանոց խմբերի այնպես, որ նախանշված երեխաներից յուրաքանչյուրը ընդգրկված լինի խմբերից մեկում: Դասը ավելի հետաքրքիր և գունեղ դարձնելու համար, օգտագործվում են գունավոր քարտեր և գրիչներ: Նախապես պատրաստված խմբային աշխատանքի քարտերից երեխաները դուրս են բերում Present Continuous Tense ժամանակաձևով տրված նախադասությունները: Այնուհետև քարտերը, որտեղ ‹‹a›› ,‹‹b››, ‹‹c››, ‹‹d›› խմբի անդամները կատարել էին աշխատանքները, փոխանակում են միմյանց հետ, և հանձնարարվում է թարգմանել այդ բառերը: Այնուհետ հանձնարարվում է կազմել պարզ նախադասություններ, օգտագործելով յուրաքանչյուր չորս թերթիկներից չորսական բառ: Քարտերը փոխանակվում են խմբերի հետ,հակառակ խումբը պետք է լինի ուշադիր, որպեսզի թերության կամ սխալի դեպքում ինքը կատարի ուղղումներ և լրացումներ: Տրված ժամանակի ավարտից հետո խմբերը հերթով ներկայացնում են իրենց աշխատանքը այնպես, որ բոլորը մասնակցություն ունենան, ընտրելով հինգ բառ տեղում խմբերը՝ բանավոր կազմում են նախադասություններ, խմբից որևէ մեկը գրում է գրատախտակի իրենց հատկացված սյունակում: ՈՒսուցիչը կիրառում է ‹‹ Մտագրոհ ›› մեթոդը, որպեսի դասը անցնի համագործակցային մթնոլորտում: ՈՒսուցիչը գնահատում է լավ և ակտիվ աշխատող աշակերտներին , ինչպես նաև խրախուսում է այն աշաակերտներին, ովքեր դժվարությամբ են մոտիվացվում դասին: ՈՒսուցիչը հանդես է գալիս ուղղորդողի և օգնողի կարգավիճակում:

3.3. Փորձարարական դաս-2

Այսօրվա դասի թեման էր ‹‹ To Be բայը›› թեման (տե՛ս դասապլան-1 էջ՝ 17): Դասը սկսվեց տնային աշխատանքի ստուգումով և սխալների ուղղումով ու բացատրությամբ: Դասը կազմակերպվեց համագործակցային ուսուցման մեթոդով, կիրառելով նաև հարց ու պատասխանի, մտագրոհի, մտքերի քարտեզագրման մեթոդները: Դասարանը համասեռության սկզբունքով բաժանվեց չորս խմբերի, բոլոր խմբերին հանձնարարվեց նախապես տրամադրված քարտերի տեքստերից դուրս գրել To be բայերով կազմված նախադասությունները, դրանք դարձնել հարցական և ժխտական: Նախանշած ժամանակում աշխատելուց հետո, աշակերտները թղթերը փոխանակում են այլ խմբերի հետ և հանձնարարվում է ստուգել զուգահեռ խմբի աշխատանքը, այնուհետև քարտերը վերադարձվում է մայր խումբ: Նախանշած ժամանակի ավարտից հետո

խմբերի խոսնակները հերթով ներկայացնում են իրենց աշխատանքը, մասնակցում են բոլորը, այնուհետև պատասխանում են զուգահեռ խմբերի հարցերին: Մեկ կողպեք երեք բանալի մեթոդի կիրառությամբ՝ նախապես բաժանված տեքստերի մեջ նախադասությունների բաց թողնված մասում անհատապես տեղադրում են երեք տրված բառերից To Be բայի ճիշտ խոնարհված ձևը: ՈՒսուցիչը կիրառում է << Մտագրոհ >> մեթոդը, որպեսի դասը անցնի համագործակցային մթնոլորտում: ՈՒսուցիչը գնահատում է լավ և ակտիվ աշխատող աշակերտներին , ինչպես նաև խրախուսում է այն աշաակերտներին, ովքեր դժվարությամբ են մոտիվացվում դասին: ՈՒսուցիչը հանդես է գալիս ուղղորդողի և օգնողի կարգավիճակում:

4. Վերլուծություն

Հետազոտությունը թույլ է տալիս հանգել հետևյալ այն եզրակացությանը, որ ուսուցման համագործակցային մեթոդը նպաստում է ոչ միայն ուսման արդյունավետության բարձրացմանը, այլև զարգացնում է ստեղծագործական մտածողությունը, գիտելիքները դարձնում է կիրառելի և նպաստում ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանն ու հարստացմանը:

Համագործակցային մեթոդի շնորհիվ աշակերտները՝

- ✔ կարողանում են կատարել ուսումնական ստեղծագործական աշխատանք,
- ✔ կարողանում են գտնել իրենց ստացած գիտելիքների և իրենց անձնական կենսափորձի միջև եղած փոխադարձ կապը, որպեսզի գիտելիքը գործնական կիրառություն գտնի,
- ✔ դառնում են վերլուծություններ կատարող, հարց առաջադրող և պատասխանող,
- ✔ դասարանում գլխավոր դերակատարողը դառնում է աշակերտը, գերակայում է աշակերտակենտրոն ուսուցումը,
- ✔ սովորում է համագործակցել և աշխատել խմբում:

Այսպիսով հասարակական բուռն զարգացումները, ժամանակակից կրթական բարեփոխումները կյանքի են կոչել նոր՝ տնտեսական, գիտական, մշակութային և այլ պահանջներ, որոնք էլ պայմանավորել են մանկավարժական գործընթացի արմատական փոփոխությունները՝ ուսուցիչ–աշակերտ հարաբերություններից անցում դեպի ուսուցիչ–աշակերտ– աշակերտ հարաբերությունների ձևավորմանը: Ժամանակակից ուսուցման գործընթացում կրթության հիմնախնդիրների շարքում իր կարևոր տեղն ունի դասավանդման նոր մեթոդների և ձևերի, մանկավարժական նոր տեխնոլոգիաների որոնումն ու կիրառումը: Տեսական և փորձարարական աշխատանքների արդյունքում պարզ դարձավ, որ համագործակցային ուսուցման մեթոդը կարող է արդյունավետ կերպով կիրառվել ժամանակակից դպրոցի ուսուցման գործընթացում, որպես ստեղծագործական մտածողությունը զարգացնող միջոց: Փորձարարական աշխատանքների արդյունքները փաստում են, որ համագործակցային ուսուցման մեթոդը նպաստում է ոչ միայն սովորողների ստեղծագործական մտածողության և նվազագույն գիտելիքի ձևավորմանն ու զարգացմանը, այլ նաև

հանրակրթության պետական չափորոշչի մյուս բաղադրիչների՝ գիտելիքների համակարգի, հաղորդակցական, համագործակցային, ստեղծագործական, ինքնուրույն գործունեության կարողությունների ու հմտությունների և սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը: Փորձարարական դասերը իմ նախանշած աշակերտների համար անցան շատ հետաքրքիր ու արդյունավետ, ավելի մեծ ակտիվություն ցուցաբերեցին, քան սովորաբար և ավելի մեծ դրական արդյունքի հասան:

5.Գրականության ցանկ

1. Ադամյան Ն., Դասավանդման մեթոդիկայի արդի տեխնոլոգիաներ, Ուսումնամեթոդական ձեռնարկ, «էդիթ Պրինտ», Երևան 2018, 264 էջ:

2. Արնաուդյան Ա., Օհանովա Ի., Գրիգորյան Ք., Դավթյան Մ., Զոհրաբյան Ա., Հովհաննիսյան Գ., Սեմինար պարապմունքների ուղեցույց, Ձեռնարկ ուսումնական ծրագրեր մշակող մասնագետների համար, ԱՑՌԵՔՍ,Երևան,2002, 272 էջ:

3. Դավթյան Մ., Գրիգորյան Ք., Արնաուդյան Ա., Զոհրաբյան Ա., ՀովհաննիսյանԳ.,Օհանովա Ի., «Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ»,Ձեռնարկ ուսուցիչների համար, ԱՑՌԵՔՍ, Երևան, Տիգրան Մեծ, 2004, 319 էջ:

4. Ն. Վարդումյան, Ա. Սարգսյան, Լ. Սրուցեկո, Ռ. Պետրոսյան, Գ.Հարությունյան, Ն. Մարկոսյան, Ֆ. Երիցյան, Գ. Սիմոնյան, Ի. Եղիկյան, Նոր մոտեցումներ ուսուցիչների պատրաստման գործընթացին, Գործիմաց մոտեցում, Տեսություն և պրակտիկա, ձեռնարկ ուսուցիչների պատրստման համար, ԱՑՌԵՔՍ, Եր., 2004, 196 էջ:

6.Հավելված

Դասապլան 1.

ՈԻսուցիչ ՝ Արմինե Սահակյան

Առարկա՝	Անգլերեն լեզու	Ամսաթիվ	22.09.2022	Կիսամյակ	I	Դասարան	VI
Թեմա՝	‹‹Present Continuous Tense››						
Օգտագործվող նյութեր՝	Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, բառատետր, խմբային քարտեր, գունավոր գրիչներ:						
Դասի նպատակը՝	• Իմանալ ներկա շարունակական **ժամանակա**ձևի կազմությունը, • Իմանալ, որ ներկա շարունակական ձևի կազմության մեջ բային ավելանում է **-ing** վերջավորությունը: • Կարողանալ կազմել ներկա շարունակական ժամանակաձևով հարցական և ժխտական նախադասություններ, • կատարել աշխատանք խմբի ներսում համագործակցային ուսուցման մեթոդով, • Իմանալ նորածանոթ բառերի թարգմանություններ**ն** ու արտաբերման ճիշտ ձևերը, • Աջակցել ընկերներին կազմել նոր նախադասություններ:						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքները	• Տեքստից դուրս գրել ներկա շարունակական ժամանակաձևով կազմված նախադասությունները, • Դուրս բերված նախադասությունները դարձնել հարցական և ժխտական, • հիմնավոր պատասխանել ուսուցչի և դասարանցիների հարցերին:						

Գործողությունները(ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվողմեթոդ(ներ)
5րոպե-սկիզբ	Աշակերտները դասարանը պատրաստում են աշխատանքի համար և սպասում են ուսուցչի հրահանգներին, Ներկայացնում են տնային աշխատանքները,	Ստուգում են տնային աշխատանքները, բացատրում անհասկանալի մասերը, Աշակերտներին բաժանում է խմբային քարտերը , հնարավորինս հստակ և		

10բոպե–ընթացք **15** բոպե	Նախապես բաժանած քարտերի տեքստերից երեխաները դուրս են բերում **Prezent continions** ժամանակաձևերով նախադասությունները: Այնուհետև համագործակցային աշխատանքի քարտերը երեխաները փոխանակում են մյուս խմբերի աշխատած քարտերի հետ, որպեսզի մյուս խումբը , տարբերվող գույնի գրիչով կատարի ուղղումներ և լրացումներ՝ եթե այդպիսիք կան: Այնուհետև քարտերը վերադարձնում են մայր խումբ: Այնուհետ դասարանը տարասեռության սկզբունքով բաժանվում է չորս հոգանոց խմբերի այնպես, որ նախանշված երեխաներից յուրաքանչյուրը ընդգրկված լինեն խմբերից մեկում: Հանձնարարվում է բանավոր	հասկանալի բացատրում է առաջադրանքի պահանջը, ուղղորդում է խմբերին ինքնուրույն կատարելու աշխատանքը : Հանձնարարում է տեքստից դուրս գրել **Present Continuous** ժամանակաձևով **կազմված** նախադասություններև նշված նախադասությունները դարձնել հարցական և ժխտական : Հերթով մոտենում է խմբերին, անհրաժեշտության դեպքում ցուցումներ է տալիս, կատարում է շտկումներ: Հանձնարարել քարտերը փոխանակել և կատարել ուղղումներ: Կատարում է սխալների քննարկում և բացատրում, բանավոր առաջ մղող հետադարձ կապի տրամադրում:	**1**.Ի՞նչ է ցույց տալիս ներկա շարունակական ժամանակաձևը: **2**.Ինչպե՞ս է կազմվում հարցական և ժխտական նախադասությունները ներկա շարունակական ժամանակաձևում: **3**.Ինչպե՞ս է արտահայտվում այդ ժամանակաձևը հայերենում:	Հարցադրումների մեթոդ

12րոպե	թարգմանել նախադասությունները: Տրված ժամանակի ավարտից հետո խմբերի խոսնակները հերթով ներկայացնում են իրենց աշխատանքը այնպես, որ բոլորը մասնակցություն ունենան: Նորածանոթ բառերից **(to have, to do, to take, to go, to wash, to dress, to come, to read, to watch, to make, to clean, to play)** ընտրելով հինգ բառ խմբի երեխաները գրում են գրատախտակին , և գործածում են նախադասության մեջ,**ներկա** շարունական ժամանակաձևով իրենց հատկացված սյունակում:	Նոր թեմայի հաղորդում աշակերտների մասնակցությամբ Գրատախտակի վրա թարգմանում է անծանոթ բառերը: ՈՒղղորդում է աշակերտներին, որպեսզի նոր թեման ճիշտ ընկալվի և օգնում է ճիշտ արտասանել նոր բառերը: Կիրառում է << խճանկար>> մեթոդը, որպեսի դասը անցնի համագործակցային մթնոլորտում: Գնահատում և խրախուսում է լավ և ակտիվ աշխատող աշակերտներին և նախանշված աշակերտներին:		Համագործակցայի ուսուցմ ան մեթոդ Խճանկարի մեթոդ Հարց ու պատասխանի մեթո

3բոպե				
Տնային աշխատանք	Աշխատանքային տետրերում կազմել հինգ նախադասություններ՝ նեբկա շարունակական ժամանակաձևով , և նույն նախադասությունները դարձնել հարցական և ժխտական:			

Դասապլան **2**.

ՈՒսուցիչ՝ Արմինե Սահակյան

Առարկա՝	Անգլերեն լեզու	Ամսաթիվ	**1.02.2022**	Կիսամյակ	**I I**	Դասարան	V I
Թեմա՝	**Simple Present ‹‹ To be ››** բայ						
Օգտագործվող նյութեր՝	Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, բառատետր, խմբային քարտեր, մատիտներ, թեստեր, ցուցապաստառ՝ ***The verb ‹‹ To Be››***						
Դասի նպատակը՝	• իմանալ **To be** բայի գործածումը, • Կարողանալ խոնարհել **To be** բայը ըստ անձնական դերանունի • Կիրառել **To Be** բայը նախադասության մեջ պատմողական, հարցական և ժխտական ձևերո						

	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ
Վերջնարդյունքները	Աշակերտները կարողանան՝ • բացատրել **To be** բայի գործածումը, • նկարագրել և ճիշտ գործածել նախադասությունների մեջ, • հիմնավորել և ճիշտ գործածել խոսելիս և գրելիս •Համեմատել հայերենի օժանդակ բայի հետ:

Գործողությունները (ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ (ներ)
5րոպե-սկիզբ **10**րոպե-ընթացք	Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին: Ներկայացնել տնային աշխատանքները: Բոլոր աշակերտների մասնակցությամբ քննարկվեց տարբերակված թեստերի սխալները, որոնք գրվեցին գրատախտակին: Դասարանը համասեռության սկզբունքով բաժանվեց չորս խմբերի: Բոլոր խմբերին նախապես տրամադրված քարտերի վրա հանձնարարվեց տեքստից դուրս գրել **to be** բայերով կազմված նախադասությունները և թարգմանել: Նախանշած ժամանակում աշխատելուց հետո, աշակերտները թղթերը	Ողջունում է դասարանին, կատարում է ներկա բացակա: Ստուգում են տնային աշխատանքները, բացատրում անհասկանալի մասերը: Նախորդ դասաժամին գրված տարբերակված թեստերի քննարկում, սխալների բացատրություն: Նոր թեմայի հաղորդում աշակերտների մասնակցությամբ: Հերթով մոտենում է աշակերտներին, անհրաժեշտության դեպքում ցուցումներ է տալիս, կատարում է շտկումներ:	**1.**Ինչպե՞ս է խոնարհվում **To be** բայը: **2.** Նախադասության ո՞ր մասում ենք տեղադրում այն: **3.**Նախադասությունը շարադասական ի՞նչպիսի փոփոխության է ենթարկվում հարցական ձևը կազմելիս: **4.**Ի՞նչ ժխտական մասնիկ է օգտագործվում **օժանդակ** բայի հետ, ժխտական նախադասություններ կազմելիս:	Մտագրոհի մեթոդ

15 բոպե **12**բոպե	փոխանակում են այլ խմբերի հետ և հանձնարարվում է ստուգել զուգահեռ խմբի աշխատանքը: Հատկացված ժամանակի ավարտից հետո խմբերը հերթով ներկայացնում են իրենց աշխատանքը, մասնակցում են բոլորը, այնուհետև պատասխանում են զուգահեռ խմբերի հարցերին: Մեկ կողպեք երեք բանալի մեթոդի կիրառմամբ, նախապես խմբերին բաժանված առաջադրանքների նախադասությունների բաց թողնված տեղերում, խմբերի անդամները ընտրում և տեղադրում են **To Be** բայի՝ երեք խոնարհված ձևերից, համապատասխան խոնարհված ձևը ըստ դերանվան:	Կատարում է սխալների ճնարկում և բացատրում, բանավոր առաջ մղող հետադարձ կապի տրամադրում Նոր թեմայի հաղորդում աշակերտների մասնակցությամբ ՈՒղղորդում է աշակերտներին, որպեսի նոր թեման ճիշտ ընկալվի և օգնում է ճիշտ արտասանել նոր բառերը: Կիրառում է << էվրիստիկ զրույց >> մեթոդը, որպեսի դասը անցնի համագործակցային մթնոլորտում: Խրախուսում և գնահատում է լավ և ակտիվ աշխատող աշակերտներին , ինչպես նաև խրախուսում է այն աշաակերտներին, ովքեր դժվարությամբ են մոտիվացվում դասին:		Հարցադրումների մեթոդ Համագործակցային ուսուցմ ան մեթոդ Երեք բանալի մեկ կողպեք մեթոդ: << էվրիստիկ զրույցի>> մեթոդը

3բոպե				

Տնային աշխատանք	Տնային աշխատանք՝ **Վ. 5** Տրված նախադասությունները դարձնել հարցական և ժխտական